

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1/4

քսանյոթը սեպտեմբերի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ

Ա. Հ. Սիմոնյան

Հաստատված է

ԵՊՀ գիտական խորհրդի 2012 /2013 ուստարվա թիվ __1__ նիստում

ԵՊՀ ռեկտոր՝ _____ Ա. Հ. Միմոնյան
«27» սեպտեմբերի 2012թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը համալսարանում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:
- 1.2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է ԵՊՀ այլ կառուցվածքային ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:
- 1.4. Կենտրոնն ունի ԵՊՀ խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ) և կնիք:
- 1.5. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

- 1.6. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացնում է ԵՊՀ գիտական խորհուրդը՝ ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ:

2. Կենտրոնի խնդիրներն ու գործառույթները

- 2.1. Կենտրոնի խնդիրներն են.

- 2.1.1. ԵՊՀ որակի ապահովման (ՈԱ) քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերական վերանայում, վարչական աջակցություն բոլոր մակարդակներում՝ դրանց իրագործմանը:
- 2.1.2. Որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԵՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:
- 2.1.3. Կրթության որակի համար ԵՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, պետություն և հասարակություն) շահեկիցների առջև:
- 2.1.4. Կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում և վարչական օժանդակություն՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում:
- 2.1.5. Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում:

- 2.2. Կենտրոնի գործառույթներն են.

Կենտրոնը՝

- 2.2.1. մշակում, իրականացնում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցում դրանց արդյունքների մասին,

սահմանում է որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ՝ ընդունված եվրոպական պահանջներին համահունչ,

- 2.2.2. մշակում է ԵՊՀ ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- 2.2.3. համակարգում, վերահսկում և վարչական աջակցություն է տրամադրում ՈԱ գործընթացների իրականացմանը ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում,
- 2.2.4. ապահովում է ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- 2.2.5. կազմակերպում է ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- 2.2.6. համակարգում է համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,
- 2.2.7. համագործակցում է ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հետ,
- 2.2.8. ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- 2.2.9. պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում,
- 2.2.10. կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,

- 2.2.11. համակարգում է ԵՊՀ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,
- 2.2.12. մշակում և իրականացնում է դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) և ընթացակարգերը,
- 2.2.13. համագործակցում է ԵՊՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների ՈԱ մշտական հանձնաժողովների հետ և աջակցում նրանց աշխատանքներին:

3. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

- 3.1. Կենտրոնի աշխատանքների ընդհանուր համակարգումը ԵՊՀ ռեկտորի համապատասխան հրամանով վերապահվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
- 3.2. Կենտրոնը ղեկավարում է կենտրոնի տնօրենը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:
- 3.3. Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՊՀ ռեկտորը:
- 3.4. Կենտրոնի տնօրենը`
 - 3.4.1. պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը, համաձայն ԵՊՀ կանոնադրության մասնակցում ԵՊՀ ռեկտորատի աշխատանքներին,
 - 3.4.2. ԵՊՀ ռեկտորատում և գիտական խորհրդում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով և հաղորդումներով,
 - 3.4.3. ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս հա-

մապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ Կենտրոնի փոխգործակցությունը,

- 3.4.4. ստորագրում է Կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ ու փաստաթղթեր,
- 3.4.5. Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ԵՊՀ ռեկտորին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնում է համապատասխան զեկույց և առաջարկություններ Կենտրոնի գործունեությանն առնչվող ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,
- 3.4.6. ԵՊՀ ռեկտորին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ,
- 3.4.7. ներկայացնում է Կենտրոնը արտաքին շփումներում, Կենտրոնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում և ստորագրում համապատասխան համագործակցությանն առնչվող փաստաթղթեր՝ դրանց մասին պարբերաբար զեկույցելով և համաձայնեցնելով Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորի հետ,
- 3.4.8. կազմակերպում և հսկում է Կենտրոնում տարվող գործավարությունը, ինչպես նաև կատարում Կենտրոնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,
- 3.4.9. պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար: